

րանական ծրագրի կրաւորական իրականացումը: Եթէ Թուրքիան յաղթանակներով չէր հասնէր Բաղու, Բուխարա, Նիւա՝ բոլշեւիկեան կարմիր դրօշակով այդ բոլոր միութիւններու վրայով կը հասնէր Մոսկուա: Կասկածէ դուրս է, որ Թուրք-թաթարական տարրը աւելի զօրաւոր կերպով իրարու պիտի շղթայուէր ու միանար կազմակերպուած Թուրքիոյ ներկայութենէն ու միութենէն ներչնչուած: Թուրքիա պիտի ներկայանար զինուորական եւ վարչական լաւ կազմակերպուած միութիւն մը, աւելի փորձառու քան միւս հանրապետութիւնները, որոնք շարուած են Ռուսաստանի շուրջը, եւ աւելի անկախ քան միւս հանրապետութիւնները, որովհետեւ իր աշխարհագրական դիրքով եւ ազդագրական միապաղաղութեամբ, իրաւապէս պիտի ըլլար Մորհրդային Միութեան մէջ, իսկ իրապէս պիտի ըլլար անկախ՝ իր ներքին գործերու եւ ազգային միութիւնը կերտելու կենսական խնդրի մէջ:

Թուրքիա օր մը չէ օր մը պիտի ընտրէ այս ճանապարհը, եւ եթէ թողնեն, որ ան այդ ուղիին մէջ իր ուղածին պէս զարգանայ, կասկածէ դուրս է որ Թուրքիան վերջնական կործանումէ պիտի փրկուի, պիտի կորսնցնէ իր անկախութիւնը, սակայն պիտի զօրանայ ազգային տարրերով եւ պիտի պահպանէ իր հողային ամբողջութիւնը:

Հայերս որեւէ բարիք չենք կրնար սպասել այս քաղաքական հաւանականութենէն, ընդհակառակը հայկական հարցը անորոշ ժամանակով պիտի յետաձգուի: Մորհրդային «եղբայրութիւն»ը որեւէ հաւաստիք չի տար «խաղաղ» կերպով լուծելու ժողովուրդներու ինքնորոշման խնդիրը: Իսկ գոռոզ Թուրքիան, կասկածէ դուրս է, որ պիտի դառնայ աւելի քան գոռոզ բոլշեւիկեան Թուրքիա մը, որ աւելի թթու պիտի ըլլայ քան նախորդ Թուրքիաներն էին:

Այսօրուան Աղբրէյջանը ատոր ամենէն կարկառուն օրինակն է: 7-8 տարիներէ ի վեր աղբրէյջանցիները կը խօսին յանուն ընկերվարութեան, եղբայրութեան, ազգերու ինքնորոշման, եւ սակայն, Ղարաբաղն ու Գանձակի հայկական մասերը իրենց թեւարկութեան տակ կը պահեն: Ոչ իրենց յօժար կամքը կը գոր-

ծէ, ոչ տիրապետող ուստի շահը, եւ ոչ ալ Երեւան նստող հայ բոլշեւիկի ազգային կորովը կը շարժի ազգային հողային դատը լուծելու համար: Ի՞նչ երաշխիք, որ բոլշեւիկեան Թուրքիան աւելի վատ ճանապարհ պիտի չբռնէ, ու հայերը պիտի չսեղմէ Սեւանայ լճի մօտիկ ափերը:

Հայ ժողովուրդը այս բոլորը կը զգայ բնագոյօրէն եւ քաղաքական փորձառութեամբ: Հոն, ուր թրքական շահերը կ'պահովուին, անխուսափելի է հայկականի վնասը: Հայ ժողովուրդն իր Ֆիզիքական գոյութեան եւ քաղաքական իտէյի ամենէն մեծ վտանգը կարմիր մահիկին մէջ կը տեսնէ: Իսկ եթէ այդ կարմիր մահիկը վերածուի կարմիր աստղի, հայ ժողովուրդը կը մնայ դարձեալ հին համոզման: Որովհետեւ Թուրքը մահիկ դրօշին տակ կեն սուրերով կը ջարդէր, իսկ կարմիր աստղի ծածանման պարագային կարող է հաշտուիլ կացինի հետ, իր ջարդը շարունակելու համար:

VI

Որ կողմէ ալ որ մօտենաք բոլշեւիկեան Ռուսաստանի Մերձաւոր Արեւելքի քաղաքականութեան եւ որպիսի դասաւորութիւն ալ որ ուզէք տալ ուս-թրքական յարաբերութիւններուն, շօշափելի տուեալներ կը պակսին բոլշեւիկեան Ռուսաստանի օրիննտացիան ընդգրկելու: Շան գլուխը թաղուած է Թուրքիոյ մէջ: Ռուսաստանը կը շոյէ այդ գայլի գլուխը, երբ անոր ատամները խրուած կը մնան հայ ժողովրդի կողմ: Հայ բոլշեւիկները կը պահանջեն, որ մենք բոլշեւիկեան Ռուսաստանին նայինք, ատանց գայլին ուշագրութիւն դարձնելու: Այդ ոչ թէ ուսական օրիննտացիա է, որ հայ բոլշեւիկներու կողմէ բռնի կը փաթաթուի հայ ժողովրդի վրին, այլ քրքական գայլի օրիննտացիան է, արիւնալի երախ մը, որ հայկական սեպը կ'ուզէ լսպիլ, հարթելու համար համաթուրանեան ճանապարհը:

Հայ ժողովուրդը նման օրիննտացիա կըրնայ ունենալ միայն սուրի ու հուրի ուժով, բայց երբեք իր ազատ կամքով եւ քաղաքական գիտակցութեամբ: Արեւածաղիկը, որ բուսական բնագոյով իր օրիննտացիան կ'որոշէ, կը դառնայ այն կողմը, ուրկէ արեւը կարող է իր